

Ա Ն Ա. Պ Ա Տ Ո Ւ Խ Ա

(Պ Ա Տ Կ Ե Ր)

Աւագների անհուն, անծայր, անվերջ սեւացած կաթսաները եւ վառեցին խորոյիները:

Արեւի կիզիչ ճառագայթները շիկացրել են օդը եւ նու երերուն, հաղիս հաղ նկատելի հսանքներավ լցւել է ամբողջ տարածութիւնը:

Դժուար է շունչ քաշել անվամ:

Աւագներից բարձրանում է նօսր գուրշին եւ իսկոյն չքանում անշարժ, ծանրացած օդում:

Դեղին, պապղուն աւազի տակից տեղ տեղ երեւում են սատկած կենդանիների կմախքների սպիտակին տուղ սոկորները եւ դանկերը:

— Զը՞նդ... զը՞նդ... զը՞նդ, տարածում է անապատի սուսունքի մէջ:

Եւ զափկերից իշնում է ցած կարաւանը:

Ուզաների երկար շարքը նեղ թելով գծագրում է շեռում:

Զանգերի տիսուր, մելամաղձու զօղանջիւնը մի քանի ժամանակից դառնում է աւելի պարզ արճանի նման ծանր օդում:

Առաջին ուղար, կարաւանի գլուխը, մօտենում է ովասիսին, սրի մօտ կարծես վախով կուտակուել են մի քանի վտխո արմաւենիներ եւ փոշիոտ ձարխուեր:

Ուզու հեւալով չքեց:

Նրա օրինակին հետեւեց ամբողջ կարաւանը:

Մեւամորթ ֆալւաչները սկսեցին վայր բերել բեռները, կանգնեցրին վրանները, ամրացուցին եռուանիները, կախ տուին

սեւացած կաթսաները եւ վառեցին խորոյիները:

Արեւը արգէն թեքում էր գէպի արեւմուաք. Նրա երիներանդ ճառագայթները սոկեզօծեցին անապատը:

Մութը ընկաւ գետին:

Իսկոյն եւ եթ, ինչպէս լինում է այդ հարաւում, հասաւ եւ գիշերը, եթերքի անհուն տարածութեան մէջ ցոլացին խոշոր, վառվուն աստղերը, երկնային այդ գարեւոր, մշտական կանթեղները:

Կարաւանը կամաց կամաց մասաւ քուն:

Երբեմն լուսում էր յոզնած ֆալլահի քնաթաթափի հառաջանքը, շարժող ուղտերի զանգակների մեղմ հնչիւնը: Եւ գայլաշների երկար, սիրտ մաշող սոնոցը:

* * *

Վրաններից մէկում գեռ վառում էր լապտերը:

Նրա ազօտ լոյսը, թափանցելով վրանի ծածկոցից, շարժուն ցոլքով խաղում էր աւազի հասկիների վրայ:

Վրանի անկիւնում գոյնդպոյն վալաների վրայ նստած էր մի ջահիլ կին եւ սեւեսած խոշոր, ախտը աշքերը, պատած սիւրմէյով, լապտերի կրակին, լուռ տրորում էր իւր մի քիչ դուրս ցցուած, արեւան ճակատը:

Նրա սոկեայ գրամմերից հիւսած մանեակը եւ նրա ձեռքերի եւ ոտքերի ապաւանջանները նրա շարժումների միջոցին մեզմ զընդզընդում էին եւ կարում էին վրանի սուսունքը:

Նոանից մի քիչ հետու ծալապատիկ նստած էր մի ծերունի և ծխում էր. նրա երկար շիբուխի ծուխը օղակաձեւ բարձրանում էր վերեւ:

Ծերունին ժամանակ առ ժամանակ ձգում էր յորացած հայեացքը ջահիլ կնոջը, նրա երեսին, գեղեցիկ պարանոցին եւ կիսամերկ ուսին:

— Ի՞նչ ես յօնքերդ կիտել:

Կինը ոչինչ չպատասխանեց:

— Ի՞նչո՞ւ չես պատկում:

— Քուն չունեմ:

— Լուսաբացին կարաւանը ընկնում է ճանապարհ:

Կինը շարժեց ուսերով:

Ծերունին շոկեց բարձերը, յօրանջեց եւ կրկին գարձաւ կնոջը:

— Խելքդ գլուխդ հաւաքիր, ֆաթիմ, ես թոյլ չեմ տալ քեզ գլխիս օյինսեր խաղալ. աես հա, մարակիս հարուածների տակ շան սատակ կ'անեմ եւ կամ կ'ուղարկեմ քեզ հօրդ մօս եւ ամօթը, խայտառակութիւնը ցմահ կը ծածկէ քեզ:

— Ի՞նչ է մեղքս:

— Մ'եղքդ... գու փուչ ես, փուչ ոտքից գլուխ, այդ անիծած ֆուէնկների ուսումնարանը ֆահիրէյում ֆչացրեց քեզ:

— Այստեղ սովորում էին եւ ուրիշները:

— Դու ընդգէմ մեր կրօնին... գու գարձել ես ֆրէնկ... այս'... լի՞րը... անամօթ. անիծուէր այն օրը, երբ քեզ կնութեան առի:

— Թող շանէիր... ինչո՞ւ հարիւր ոչ խար աւիր հօրս ու առիր ինձ:

— Լաւ է գժոխք զնայի, լաւ է արժանի չլինէի Մահմէտի գրախուին... քեզ հետ ես կեանք չունեմ, խաւարել է օրս, արեւու:

— Աւելի շուտ խմը, աստամիերի միջով շշնչաց կինը:

— Դու կրցրել ես նամուսդ. խօսում ես օսար աղամարդկանց հետ, լրբօրէն ծիծաղում ես, ժպսում... բենամուս...

Վրանում տիրեց լոռութիւնը եւ այդ

ծանր լսութեան մէջ հանդիպում էին իրար մարդ ու կնոջ հայեացքները, և ատելութեամբ, զզուանքով եւ թշնամութեամբ:

Ծերունին երկար հազար, տնքաց եւ պասկեց, քաշելով գլխին բրդեայ վերմակը:

Իսկ կինը անշարժ նստած էր, յառած տխուր աչքերը լավտերի լոյսին:

Ի՞նչ էր մտածում նա:

Անցեալի ո՞ր պատկերները անցնում էին նրա յիշողութեան մէջ:

Հայրական տունը, մայրը, փոքրիկ քոյրը, Գահիրէի գպլոցը, ընկերուհիները, եւ վերջապէս բարի հայրը, որ ծառայում էր ֆրանսիական գեսապանութեան մէջ, իբրեւ թարգման:

Օ՛, սքանչելի, երջանիկ օրեր:

Ցետոյ մօլլան, մի ծերուկ, նրա հետ երկար փափաց, երթեւեկութիւն, ինչոյքներ, եւ այդ զզուելի ծերունին, ցաւոս, միշտ արտառող աչքերով, վերջ ի վերջոյ դարձաւ նրա ամսւսինը:

Եւ նա, որ խելացնոր սիրում էր կտրիճ Օսմանին, նա ակամայ, ծնողների յորսդորանքների. աղաջանքների եւ ճնշման աղգեցութեան տակ, աւեց իր համաձայնութիւնը եւ այժմ թափառում է անապատում կարաւանի հետ:

Ցերեկը նա տեսաւ Օսմանին կարաւանում եւ նրա հատուկութիր խօսքերից իմացաւ, որ նա ուզտերով միացել է կարաւանին եւ վճռել է փախցնել նրան, ֆաթիմին:

— Այս գիշեր, երբ ծերուկը քնէ, գուրս եկ վրանից, շշնչաց Օսմանը:

Եւ այժմ կինը սրտատրով մտածում է այդ մասին:

Անապատից համում էին խուլ ձայներ, հազիւ հազ լսելի, անորոշ հնչիւններ:

Այդ ովախաց հեռու, հեռու լաց էին լինում բորենիները, մանչում էին քաղցած վաղրերը եւ առիւծները:

Կինը ցնցւեց, վեր կացաւ եւ դիմեց վրանի մուտքին:

Նա բարձրացրեց կոշտ, բրդեայ վարա-
գոյրը եւ նայեց դուրս:

Ասաղերը վաղուց մարել էին երկնքում
եւ խաւարը կլանել էր ամէն ինչ:

Կինը վերադարձաւ իր տեղը, հանգ-
ցրեց լապտերը եւ շորերով մտաւ ան-
կողին:

Վրանի սուսունքը դարձաւ աւելի ծանր
ու խեղդիչ:

Միայն ծերունու խոմիոցը խանգա-
րում էր այդ սուսունքը:

* * *

Անցաւ մի երկու ժամ:

Վրանի ծածկոցի փալար, որի մօտ
սպակած էր անքուն կինը, շարժւեց:

Դրսից մէկը զգոյշ շարժում էր փա-
լար:

Կինը նստաւ գօշակի վրայ եւ սկսեց
մտիկ տալ:

Վրանի մօտ մէկը ծանր շնչում էր:

Կինը սոռփի կանգնեց, կուցաւ խոփա-
ցնող ամսունուն եւ, համոզուելով որ նա
հանգիստ քնած է, սոռփերի մասների վր-
այ դուրս եկաւ վրանից եւ կորաւ գիշեր-
ուայ խաւարի մէջ:

— Ֆաթիմ, իմ լոյս արեւո...

— Վերջապէս, Օսման, սիրելիս...

Եւ կնոջ մէրկ ձեռքերը վաթաթուե-
ցին վրանի մօտ կանգնած երիտասարդի
վկավ:

Խուեցան խեղդուած շշուկներ, փաղա-
քշանքներ, համբոյքներ:

— Այսօր կէսօրին կը մօտենանք Գա-
հիրէին եւ ես կը վախցնեմ քեզ, ֆաթիմ:

— Լա՛ւ, լաւ... իսկ այժմ թող, գնամ.
Ժամանակ է. գարշելին կարող է զարթել:

— Մի բոպէ եւս...

— Ես վախում եմ...

Իսկ վրանում, գօշակի վրայ, լայն բա-
ցած աչքերով նստած էր ամսուսինը:

Նա, որի ականջը սովոր էր ըմբռնել
անսպասի հաղիւ հաղ լսելի հնչիւնները.
Լսեց վրանի մօտ կանգնողների խօսքերը,
շշուկը, եւ նրա շըթները ծուրուեցին
հրէշային ժպիտով:

Նա զգոյշ վեր կացաւ, հանեց բարձի
տակից մի տուփ, բաց արեց եւ վրանի ա-
րանքից դուրս թողեց երկու փոքրիկ օձ
եւ կրկին սպակեց:

* * *

Խուսաբացին կարաւանը զարթեց:

Դեղին աւազի վրայ ընկած էին երկու
դիմակ: Նրանց կրծքերի հաղիւ նկատելի
վէրքերից հոսած արիւնը մի քանի. կար-
միր կաթիլ էր սրսկել անսպատի ցոլուն
աւազի հիւլէնների վրայ:

ԳէՈՐԳ ԶՈՒԲՅԱՐ

Նոր Նախիջևան